Մարկայի ովասիսին մէջ կը հանդիպին արմաւ, գարի, ձիթապտուղ և ուրիշ պտուղներ։ Ովասիսին բնակիչները խաշնարածութիւն և ուղտապանութիւն կ'ընեն։ Իրր ճարտարարուեստ ունին ուղտի և այծի մազերով շինուած գորգեր։ Իրր վաճառք՝ ձէթ։ Այսօր Մարկա երկաթուղիով կապուած է Նակահամատիի և ինքնաշարժի ճամբով մը՝ Ֆէյումի։ Ուղտի կարաւաններու ճամբաները, որոնք հին ատենէն ի վեր գոյութիւն ունէին և որոնցմէ անցած է անշուշտ նաև մեր հայ արքեպիսկոպոսը զարմանալի հետաքրքրութեամբ մը, տակաւին այսօր կը գործածուին։

Յովհաննէս Թիւթիւնճի իր հետաքրքրական ճամբորդութեան մեկնակէտը՝ Գահիրէ դառնալէ յետոյ, Եգիպտոսէն ծովու ճամբով կ'երթայ Լիմօնս, Թոսքանայի մեծ դքսութեան առեւտրական կարեւոր նաւահանգիստը, ուր այդ թուականին բաւական թուով Հայեր կ'ապրէին։

Հետաքրքրական է դիտել տալ, թէ 1678 Սեպտ. 17էն մինչև 1680 Օգոստ. 27, երկու տարի և 10 օրուան ժամանակամիջոց մըն է (այսինքն 730 օր)։ 241 օրը ճամբու վրայ անցուցած է Յովհաննէս Թիւթիւնճի, իսկ 4 ամիսը (120 օր) ալ՝ Հապէշիստանի մայրաքաղաքը, որով 730ի վրայ 361 օրերը կը ճշդըւի թէ ինչպէս գործածուած են։ Անյայտ կը մնայ, թէ 369 մնացեալ օրերը ինչպէս անցած են։

Ասոր ալ ուրիշ մեկնութիւն չենք կրնար տալ, եթէ ոչ սա որ իր այցելած մօտաւորապէս 15 քաղաքներուն մէջ մնացած է բաւական ատեն, ինչպէս որոշ կը հասկցուի իր ուղեգրութենէն։

Օրինակ՝ Դիվարպատ հասնելէ յետոյ, իր նըկարագրութեան համաձայն՝ 30 օրուան ճամբայ հեռուն ապրող թագաւորէն արտօնութիւն ուզուած է,